թանայ դէպի հարաւ և կ'ուղղէ վանքին Փոսորակ արտերը։ Այս ներքին «քանքան»ին վրայ կը չինէ նաև դինգ մը (37)։

Բազմաշխատ և յոգնաշահ հայրապետը՝ ջուրի արդիւնաւոր գործածութեան համար Էջմիածինը կը գեղեցկացնէ հինգ «ծովակ»ներով կամ արհեստական լճակներով։

Գիւղին հիւսիսային կողմը, արտերուն սկիզբը, Մոլադարսուն գիւղին հանդիպակաց կը չինէ առաջին մեծ «ծովակ»ը, նաև իբրև սահման վանապատկան հողին և Մոլադուրսունցիներու հողին միջև (38)։

Ասկէ աւելի վար, այգեստաններու սկիզբը, արեւելեան կողմը, կը չինէ երկրորդ և փոքրիկ «ծովակ» մը (39)։

Այս փոքրիկ լճակին ստորև՝ կը չինէ պզտիկ «ծովակ» մ'եւս Ս. Հռիփսիմէի վանքին վերի կողմը դէպի արեւելք, Երեւանի ճամբուն ներքև (40)։

Չորրորդ լճակ մը կը չինէ նաև ներքին «քանքան»ին ծայրը (41)։

Երեք առաջին լճակներէն աւելի վար, Էջմիածնի գիւղին ներքև, հարաւ-արեւելեան կողմը, Շոռլու և Ղոռուղ գիւղերուն

---

(37) Ջամբռ., 198։
(38) Անդ։
(39) Անդ, 199։
(40) Անդ։
(41) Անդ, 200։